



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«20» 09 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000071

Ձեռնարկողը՝

«ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Սյունիքի մարզ, գ. Լեռնաձոր

Գործունեությունը՝

Լեռնաձորի ավազակոպճազլաքարային խառնուրդի հանքերնակումում 2019-2021թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000071

<<20>> 09 2019թ.

Սյունիքի մարզի Լեռնաձորի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքերևակումում 2019-2021թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր

Ձեռնարկող՝

<<ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայր (Գ կատեգորիա)

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է 2019-2021թթ. ընթացքում կատարել Սյունիքի մարզի Լեռնաձորի ավազակոպճագլաքարային խառնուրդի ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունը կատարվելու է <<ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի ուժերով և ֆինանսական միջոցներով:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Լեռնաձոր բնակավայրի վարչական տարածքում, Ողջի գետի ձախափնյա մասի ողողահունում: Գետի հունում ջրերի հոսքի դանդաղման շնորհիվ, գարնանային վարարումների ընթացքում գետաջրերով տեղափոխվող բերվածքներն այս հատվածում բեռնաթափվում են, ձևավորելով ավազակուտակներ: Գործունեության իրականացման նպատակն է գնահատել տեղամասի ավազակոպճագլաքարային խառնուրդի վերականգնվող պաշարները, պարզել վերջիններիս որակական և քանակական բնութագրերը:

Հայցվող տարածքը գտնվում է Լեռնաձոր գյուղից դեպի հյուսիս-արևելք՝ 1.3 կմ հեռավորության, 1612-1615մ բացարձակ բարձրությունների վրա: Նշված տարածքում նախկինում երկրաբանահետախուզական աշխատանքներ չեն կատարվել: Գործունեության ենթակա հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնականը՝ արոտավայրեր:

Ելնելով շրջակա միջավայրի նախարարության պահանջներից և ռիսկոլություններից, ուսումնասիրության ենթակա տարածքը (1.6 հա) փոքրացվել է (0,6 հա-ով) և կազմելու է 1 հա: Համաձայն ARM WGS 84 համակարգի՝ հայցվող տարածքի ծայրակետերի կոորդինատներն են.

- | | | | |
|------------|---------|------------|---------|
| 1. 8604935 | 4337594 | 5. 8605123 | 4337722 |
| 2. 8604916 | 4337614 | 6. 8605149 | 4337661 |
| 3. 8604984 | 4337657 | 7. 8605078 | 4337645 |
| 4. 8605055 | 4337685 | 8. 8605003 | 4337620 |



Կորորդինատները տրված են 38-33-V-b-2_WGS կադաստրային 1:10000 մասշտաբի հանույթային քարտեզի համաձայն:

Տարածաշրջանը հարուստ է օգտակար հանածոներով, տնտեսության ճյուղերից գերակշռող են հանքարդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

Լեռնածորի ավազակոպճագլաքարային երևակման շրջանին բնորոշ է կտրտված ռելիեֆը: Այն մտնում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտու մեջ, գրունտի հորիզոնական արագացման առավելագույն մեծությունը 0.3g է: Երևակման տարածքում սողանքային երևույթներ և փլուզումներ չեն հայտնաբերվել: Շրջանի կլիման չոր մերձարևադարձային է, տեղումների տարեկան քանակը կազմում է 500-600 մմ, օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ + 12.1°C:

Հայցվող տարածքով հոսում է 82 կմ երկարությամբ և 1175կմ² ավազանով Ողջի գետը: Գարնանը գետը խիստ վարարում է, իսկ մնացած ժամանակաշրջանում ունենում է գետի ջրերի մակարդակի կայուն նվազում:

Առավել քիչ գետային հոսքը դիտվում է ձմռան և աշնան ամիսներին, որի ժամանակ գետի սնուցումը կատարվում է ստորգետնյա ջրերից:

Համաձայն նախնական գնահատման հայտի ուսումնասիրության բուն տարածքում հողաբուսական շերտը բացակայում է, քանի որն այն ողողահունային է և ծածկված է կավաավազագլաքարակոպճային խառնուրդով:

Ողջի գետի և նրա վտակների ափերի ջրային և մերձափնյա հատվածներին բնորոշ են տիպային բուսականությունը (ձիաձետի, կեռոն լաքսմանի, փափկամազ ջրային, արենադոտ ուռատերև և այլն): Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից են՝ լճագորտը, կանաչ դողոշը, ջրային լորտուն, կարմրավոր սահօձը, գետային կրաբերը և այլն, իսկ թռչուններից՝ սևագլուխ վարսակուկը, սև կեռնեխը, ծիծեռնակը և այլն:

Բուն երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան:

Համաձայն նախնական գնահատման հայտի երկրաբանահետախուզական աշխատանքներն իրականացվելու են երկրաբանահանույթային երթուղիների (0.5 կմ), հետախուզահորերի անցման և նմուշարկման աշխատանքներով: Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում նախատեսվում է՝ տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթի, հետախուզահորերի հետախուզման, փորվածքների փաստագրման, նմուշարկման, փորձնական հանույթի, հետախուզված պաշարների արդյունաբերական նշանակության գնահատման աշխատանքների, ռադիոչափական, հիդրոերկրաբանական և ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների կատարում:

Օգտակար հանածոյի որակական հատկությունների (ֆիզիկատեխնիկական ցուցանիշների) ուսումնասիրություններն իրականացվելու են մասնագիտացված լաբորատորիայում: Աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են՝ 2019թ.-2021թ. 1-ին եռամսյակը:

Նախնական տեղազննման արդյունքներով հետախուզվող ավազակոպճագլաքարային խառնուրդը 228 մ ձգվող երկարությամբ և 43մ միջին լայնությամբ, ավազակավային նստվածքներով և մերկացած շերտով կուտակ է: Օգտակար հանածոյի շերտի միջին հզորությունը կազմելու է 4.0-4.5 մ: Ողջի գետի ամենամոտ ափից թողնվելու է բնամաս՝ ամենաքիչը 5մ:

Ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության, Լեռնածորի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքերևակումը համապատասխանելու է 1-2 խմբին: Օգտակար հանածոյի որակական հատկությունների ուսումնասիրությունը կատարվում է ՀՍ ՄԾՏ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական



աշխատանքների համար» և <US ГОСТ 8736-95 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջներին համապատասխան:

Նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման ընթացքում օգտակար հանածոյի նախատեսվող արդյունաբերական պաշարները կազմելու են մոտ 45,0 հազ.մ³: Համաձայն հայտի հետախուզական աշխատանքները կատարվելու են միմյանցից 30-100 մ հեռավորությամբ տեղադրված, մինչև 5.0 մ խորությամբ (կտրվածքը՝ 2.0 մ², ծավալը՝ 10մ³) 8 հետախուզահորերի միջոցով, որը հնարավորություն կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական C: կարգով:

Համաձայն նախնական գնահատման հայտի ավազակույճային խառնուրդի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման նպատակով կատարվելու է նաև 75մ² մակերեսով փորձնական բացահանքի բացում: Հետազոտվող երևակման տարածքից մեխանիկական եղանակով հանվելու է 300 մ³ ծավալով փորձնական հանույթ: Հանված օգտակար հանածոն տարածքում չի կուտակվելու, տեղափոխվելու է տարածաշրջանում գործող որևէ ջարդիչ-տեսակավորման արտադրամաս: Կատարվելու են նաև՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների (8 նմուշ), քիմիական անալիզների (3 նմուշ) և միներալոգա-պետրոգրաֆիական (3 նմուշ) ուսումնասիրությունների նմուշարկումներ: Նմուշարկումը կատարվելու է ակոսային եղանակով՝ յուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրճատումից հետո հասցվելու է 30 կգ-ի:

Դաշտային աշխատանքները տևելու են 3-4 ամիս, աշխատանքների կատարման համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները: Հետախուզահորերի անցումը և փորձնական հանույթը կատարվելու է վարձակալված տեխնիկա-տրանսպորտային միջոցներով, որոնք տեղամասում գտնվելու են կարճ ժամանակով և չեն կայանվելու հայցվող տարածքում:

Համաձայն գնահատման հայտի ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարվելու է V կարգի ամրության ապարներում՝ էքսկավատորով հետախուզահորերի անցում (80մ³): Ուսումնասիրության արդյունքում հանված հողային զանգվածների պահպանման առանձին վայրեր չեն նախատեսվելու, քանի որ երկրաբանական փաստագրումից (50մ) և նմուշարկումից հետո (1-2 օրվա ընթացքում) կատարվելու են հետախուզահորերի ձեռքով լցման աշխատանքներ (67մ³), իսկ մնացած (13մ³) օգտագործվելու է խախտված տարածքների հարթեցման համար:

Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու է բնառեսուրսներից՝ ջուր, ճանապարհների փոշենստեցման նպատակով (0.5լ/մ²): Օգտագործվող ջրի անհրաժեշտ ընդհանուր քանակը կազմելու է 24000լ: Տեխնիկական և խմելու ջուրը բերվելու է Լեռնաձոր գյուղի ջրամատակարարման ցանցերից՝ համապատասխան ջրօգտագործման պայմանագրերի համաձայն:

Համաձայն հայտի՝ Ողջի գետի ողողահունում գտնվող ուսումնասիրվող տարածքը զուրկ է հողաբուսական շերտից, որի պատճառով հողերի լեռնատեխնիկական վերականգնում (ռեկուլտիվացիա) չի կատարվելու: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո կատարվելու է խախտված տարածքների (90մ²) հարթեցում, որի համար նախատեսվում է ծախսել 60 000 ՀՀ դրամ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու օդային ավազան փոշու, մեխանիզմների աշխատելու արդյունքում արտանետվող ծխագազերի, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման հետ, որը լինելու է թույլատրելի նորմերի սահմաններում: Ջրային ռեսուրսների մեջ արտահոսքեր, ինչպես նաև վտանգավոր թափոնների (մեխանիզմների յուղեր, քայուղեր, մետաղաջարդոն, անվադողեր) կուտակումներ չեն առաջանալու:



Նախնական գնահատման հայտով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ.

- փոշենստեցման նպատակով՝ փորձնական հանույթի բարձման և տեղափոխման ժամանակ գրունտային ճանապարհների (0.8 կմ) ջրցան,

- օգտագործվող տրանսպորտային միջոցների վրա արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների լիցքավորում, վերանորոգում և տեխնիկական սպասարկման իրականացում տարածքից դուրս՝ մոտակա լիցքավորման և սպասարկման կայաններում,

- տարածքում նավթամթերքների պահեստավորման բացառում,

- աշխատանքների կատարման վայրում նյութերի (թափոնների) բաց այրման արգելում,

- կատարվող աշխատանքային տեղամասերի (ցանկապատում) մեկուսացում:

- մթնոլորտային օդի աղտոտվածության պարբերաբար հսկողության սահմանում՝ արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կատարման միջոցով (շաբաթական 1 անգամ),

- հողային ծածկույթի աղտոտումը կանխելու նպատակով՝ նմուշարկման միջոցով լաբորատոր անալիզ (ամիսը 1 անգամ),

- Ողջի գետի ջրերի աղտոտվածությունը կանխելու նպատակով՝ շաբաթական 1 անգամ և գետի ափերի՝ ամսեկան 1 անգամ հաճախականությամբ մոնիթորինգի իրականացում,

- վայրի բնության, ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների մոնիթորինգի իրականացում՝ տարեկան 1 անգամ,

- գետի ջրերի մակարդակի կտրուկ բարձրացման վտանգի դեպքում՝ տեխնիկա-տրանսպորտային միջոցների տեխափոխում ուսումնասիրվող տարածքից բարձրադիր վայրեր՝ ջրերը աղտոտումից պահպանելու նպատակով,

- արտակարգ իրավիճակների և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների վատացման դեպքում՝ փորձնական հանույթի դադարեցում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 100.0 հազ.դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. նախատեսվող գործունեությունն իրականացվելու է, ելնելով տարածաշրջանում ավազակոպճային նյութերի նկատմամբ շինարարության պահանջարկի բավարարման անհրաժեշտությունից: Երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման ժամանակահատվածը կարճ է տևելու (3-4 ամիս), ուստի ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային:

Փորձաքննության ընթացքում նախագիծը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Լեռնաձոր համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է շրջանցել այն տարածքները, որտեղ կհանդիպեն կենդանիների, սողունների, թռչունների ձվադրման, բնադրման վայրեր:



2. Պահպանել նախնական գնահատման հայտով ամրագրված բնամասի հեռավորությունը՝ Ողջի գետի ամենամոտ ափից ամենաքիչը 5 մ:

3. Բացառել ջրային հոսքի խոչընդոտումը կամ շեղումը, ջրային ռեսուրսի աղտոտումը, ջրային ռեսուրսի մեջ կեղտաջրերի արտանետումը, ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Լեռնաձորի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքերևակումում 2019-2021թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝



Թ. Նուրիջանյան